

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

13 փետրվարի 2020թ.

Մասնակիցների ցուցակ՝

- |                        |                        |
|------------------------|------------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան      | 8. Լիաննա Գալստյան     |
| 2. Անդրանիկ Ալեքսանյան | 9. Կարեն Գասպարյան     |
| 3. Աննա Կարախանյան     | 10. Կոլյա Հովհաննիսյան |
| 4. Արամ Վերոյան        | 11. Սիրանուշ Վարդանյան |
| 5. Արման Ներսիսյան     | 12. Քրիստինա Հակոբյան  |
| 6. Գրիգորի Սադյան      | 13. Քրիստինե Գյոնջյան  |
| 7. Իգոր Մկրտումյան     |                        |

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Աննա Կարախանյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում, միաձայն հաստատվեց հետևյալ օրակարգը.

Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:
2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին:
3. «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի գործունեության հիմնական ուղղությունների նախագծի մասին:
4. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծում լրացում կատարելու մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով հրավիրելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ պարոն Իգոր Մկրտումյանը՝ նշելով, որ սույն թվականի փետրվարի 6-ին, քվորումի բացակայության պատճառով, չի կայացել կազմակերպության ժողովը և անհրաժեշտություն է առաջացել հրավիրել նոր ժողով: Ժողովի օրակարգի նախագծի հստակեցումից հետո, առաջարկություն հնչեց ժողովը հրավիրել սույն թվականի ապրիլի 10-ին՝ համատեղ հավաքի ձևով: Առաջարկությունը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

Պարոն Արման Ներսիսյանի առաջարկությամբ դիտարկվեց նաև ժողովի վերաբերյալ կազմակերպության անդամներին պատշաճ իրազեկելու մեխանիզմները: Ծավալված

քննարկման ընթացքում հնչեցին տարբեր տեսակետներ և առաջարկություններ: Քննարկման արդյունքում կազմակերպության վարչությունը գտավ, որ ժողովների վերաբերյալ կազմակերպության կողմից ներկայումս կիրառվող՝ էլեկտրոնային փոստով իրազեկման եղանակը պատշաճ իրազեկման առաջնային և արդյունավետ միջոցն է՝ հանձնարարելով:

ա) ժողովի վերաբերյալ էլեկտրոնային փոստով ծանուցումներն կազմակերպության անդամներին ուղարկել ոչ պակաս, քան 3 անգամ,

բ) ժողովի վերաբերյալ էլեկտրոնային փոստով կազմակերպության անդամներին ծանուցելիս ստեղծել ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստման հնարավորություն:

Առաջարկվեց նաև կազմակերպել հարցում կազմակերպության անդամների շրջանում՝ վերջիններիս համար առավել նախընտրելի իրազեկման տարբերակի ճշգրտման նպատակով:

Միևնույն ժամանակ պարոն Կարեն Գասպարյանը պատրաստակամություն հայտնեց կարճ հաղորդագրությունների (sms) միջոցով տեղեկացնել կազմակերպության անդամներին առաջիկա ժողովի վերաբերյալ, ինչը հավանության արժանացավ վարչության կողմից:

**Որոշում:** 2020 թվականի ապրիլի 10-ին համատեղ հավաքի ձևով գումարել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողով՝ հետևյալ օրակարգի նախագծով.

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին,
2. «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունում «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամակցությունը դադարեցնելու մասին,
3. «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությանն անդամագրվելու մասին:

2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին:

Կազմակերպության վարչության անդամները տեղեկացվեցին, որ կազմակերպությունը 8 անձանցից (Աննա Արծրունի, Աննա Սարգսյան, Լուսինե Հակոբյան, Լուսինե Մուրադյան, Սամվել Բեկթաշյան, Միքայել Սադյան, Հայկ Նահապետյան, Արամ Հարությունյան) ստացել է դիմումներ կազմակերպությանն անդամագրվելու խնդրանքով: Այդ անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելուց հետո առաջարկություն հնչեց բավարարել ստացված դիմումները: Առաջարկը դրվեց քվեարկության և միաձայն ընդունվեց:

**Որոշում:** Բավարարել Աննա Արծրունու, Աննա Սարգսյանի, Լուսինե Հակոբյանի, Լուսինե Մուրադյանի, Սամվել Բեկթաշյանի, Միքայել Սադյանի, Հայկ Նահապետյանի, Արամ Հարությունյանի դիմումները և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ:

3. «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի գործունեության հիմնական ուղղությունների նախագծի մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Գրիգորի Սաղյանը: Նա տեղեկացրեց ներկաներին, որ «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի նախագահ պարոն Աբրոյանի առաջարկով, կազմակերպության վարչության քննարկմանն է ներկայացվում միջգերատեսչական խմբի առաջիկա երկու տարվա գործունեության հիմնական ուղղությունների նախագիծը՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով: Այնուհետ, պարոն Սաղյանը ներկայացրեց այն հիմնական ուղղությունները, որոնց վրա առաջիկա երկու տարում նախատեսում է աշխատել միջգերատեսչական խումբը: Եզրափակելով իր ելույթը պարոն Սաղյանը հիշեցրեց, որ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ն, իրականացնում է այդ գերատեսչական խմբի քարտուղարության գործառույթները:

Ներկայացված նախագծի վերաբերյալ ծավալվեց քննարկում, հնչեցին տեսակետներ և առաջարկություններ:

Քննարկման արդյունքում տրվեց հետևյալ արձանագրային հանձնարարականը՝

Արձանագրային հանձնարարական՝

*«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության վարչության անդամներին՝ մինչև 2020 թվականի փետրվարի 26-ը պարոն Գրիգորի Սաղյանին ներկայացնել առաջարկություններ և դիտողություններ՝ «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի առաջիկա երկու տարվա գործունեության հիմնական ուղղությունների նախագծի վերաբերյալ:*

4. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծում լրացում կատարելու մասին:

Կազմակերպության վարչությունը դիտարկեց իր կողմից հավանության արժանացած՝ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծում լրացում կատարելու առաջարկը, այն է՝ նախագծում ավելացնել դրույթ, ըստ որի վարչությունը կարող է կազմակերպության անդամին հեռացնել կազմակերպությունից, եթե վերջինս առանց կազմակերպությանը նախապես տեղեկացնելու (գրավոր կամ էլեկտրոնային փոստով) 2 անգամ անընդմեջ բացակայել է կազմակերպության ժողովներից: Քննարկման ընթացքում առաջարկվեց նախագծում ավելացնել ևս մեկ դրույթ, ըստ որի կազմակերպության անդամը պարտավոր է կազմակերպությանը ներկայացված իր տվյալների փոփոխության դեպքում փոփոխության պահից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել կազմակերպությանը:


Առաջարկների վերաբերյալ առարկություններ չհնչեցին: Հաշվի առնելով, որ «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին հարցն ընդգրկված է կազմակերպության առաջիկա ժողովի օրակարգի նախագծում՝ վարչությունը

նպատակահարմար համարեց լրացումներ չկատարել իր կողմից հավանության արժանացած կանոնադրության նախագծում, այլ առաջարկները հնչեցնել կազմակերպության ժողովում՝ տալով հետևյալ արձանագրային հանձնարարականը.

**Արձանագրային հանձնարարական՝**


**«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության նոր խմբագրությամբ շարադրված կանոնադրության նախագծում առաջարկվող երկու լրացումները ներկայացնել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության ժողովի քննարկմանը:**

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Աննա Կարախանյան